

Անուշ Մաքսիմի Հարությունյան

մ.գ.թ.

ՀԵՀ, Կիրառական լեզվաբանության ամբիոն
anushharutyunyan1903@gmail.com

Նվարդ Սամվելի Օհանյան

ՀԵՀ, Կիրառական լեզվաբանության ամբիոն
nvard.ohanyann@gmail.com

Ամփոփագիր

Տեղեկատվական տեխնոլոգիաների (SS) ոլորտը ժամանակակից աշխարհում առաջընթացի և նորարարության շարժիչ ուժերից մեկն է: Այս ոլորտի արագ զարգացումը ենթադրում է նոր եզրույթների ստեղծում և կիրառում, որոնք արտացոլում են տեխնոլոգիական առաջընթացը և նորարարությունները: Լեզուն իր գործառույթներով ներթափանցում է գիտության մեջ եզրույթների միջոցով, որոնք ապահովում են գիտության և տեխնիկայի, արտադրության ճյուղերի, հասարակական կյանքի բոլոր բնագավառների զարգացումն ու կատարելագործումը և նպաստում հասարակության առաջընթացին: Նոր գաղափարներ արտահայտելու համար ստեղծվում և փոխառվում են նոր բառեր՝ եզրույթներ: Եզրութափամակարգի հարստացման աղբյուրների և ստեղծման գործընթացի ուսումնասիրության հարցը մշտապես եղել է բոլոր ժամանակների լեզվաբանների գերխնդիրը՝ սկսած դասականներից մինչև ժամանակակիցներ:

Եզրույթների ստեղծման գործընթացների համակարգման խնդիրներով զբաղվել են շատ գիտնականներ՝ Դ.Ս. Լոտտեն, Լ. Ա. Կանդելակին, Ռ. Գ. Պիտրովսկին, Վ. Ն. Պրոխորովը, Վ. Գ. Գակը, Ա. Վ. Սուպերանսկայան և այլք:

Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի եզրույթները ժամանակակից լեզվաբանության մեջ դասվում են առավել քիչ ուսումնասիրված խնդիրների դասին: Նույնիսկ «տեղեկատվական տեխնոլոգիա» եզրույթը շատ տարբեր և իրար հակասական կերպով է մեկնաբանվում շատ լեզվաբանների աշխատանքներում: Տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի եզրույթները ինչպես հարկն է չեն արժանացել լեզվական ուսումնասիրության, պարզաբանման և բացահայտման: Դեռ բացահատված չեն տեղեկատվական տեխնոլոգիաների եզրույթների լեզվում հայտնվելու լեզվաբանական և արտալեզվաբանական փաստերը:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Սույն գիտական հետազոտությունը ուսումնասիրում է տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտի եզրույթների իմաստակառուցվածքային առանձնահատկությունները: Տեղեկատվական տեխնոլոգիաների արագ զարգացումը, գիտության և հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները ապահանջում են եզրութաբանական լուծումներ լեզվում, ինչը անընդհատական գործընթաց է և մանրակրկիտ ուսումնասիրության, վերլուծության, բարելավման և զարգացման կարիք ունի, ինչով էլ պայմանավորված է ընտրված թեմայի արդիականությունը: Սույն հետազոտության նպատակն է՝ ՏՏ ոլորտի եզրույթների իմաստակառուցվածքային առանձնահատկությունների համակողմանի ուսումնասիրության հիման վրա բացահայտել տեղեկատվական տեխնոլոգիաների եզրութաբանության ձևավորման, զարգացման և կիրառման օրինաչափությունները: Հետազոտության շրջանակներում կիրառվել են ուսումնասիրության հետեւյալ մեթոդները՝ համադրական, զուգադրական և վերլուծական:

Հիմնաբառեր: եզրույթներ, տեղեկատվական տեխնոլոգիաներ, եզրութաբանություն, իմաստակառուցվածքային առանձնահատկություններ:

Ներածություն

Լինելով հաղորդակցման կարևորագույն միջոց՝ լեզուն ապահովում է մարդկանց միջանձնային և սոցիալական հաղորդակցումը, նպաստում է ինֆորմացիայի հավաքագրմանն ու պահպանմանը, դասակարգում և ամրապնդում է հասկացությունը, ձևավորում է մարդու գիտակցությունը և ենթագիտակցությունը [Арутюнова, 609]

Գիտության և հասարակության մեջ տեղի ունեցող փոփոխությունները արտացոլվում են լեզվում: Լինելով գործիք, որով ձևակերպվում են գիտական տեսությունները, օրենքներն ու դրույթները, գիտական հասկացություններն ու դրանց համակարգերը՝ լեզուն հանդես է գալիս և՛ որպես գիտելիքների արտահայտման միջոց, և՛ որպես գիտության կառուցվածքային տարր: Այսինքն՝ գիտության մեջ լեզվի գործունեությունը պատահական չէ [Ղաջոյան, 54]:

Այսպիսով, 21-րդ դարի սկզբին հետինդուստրիալ քաղաքակրթությունը թևակոխեց ինֆորմացիոն դարաշրջան: Համացանցը հեղափոխություն կատարեց հաղորդակցության համակարգերում: Անհատական համակարգիչը դարձավ աշխատանքի և հանգստի անբաժանելի մասը: Համակարգչային հմտությունները սկսեցին դիտարկվել որպես ժամանակակից և հաջողակ մարդու բաղադրիչներ և ներառվեցին աշխատանքի տեղավորման համար պարտադիր պահանջների շարքում: Գիտելիքների նոր ոլորտի զարգացումը հանգեցնում է հատուկ եզրութաբանության զարգացմանն ու համակարգմանը, այդ թվում՝ տեղեկատվական տեխնոլոգիաների եզրույթների առաջացմանը:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Տեղեկատվական տեխնոլոգիաների եզրութաբանությունը, որպես ինֆորմատիկայի և հաշվողական տեխնիկայի եզրույթների ամբողջություն, առավել արդիական, սակայն առավել քիչ ուսումնասիրված ոլորտներից մեկն է:

«Եզրույթ» հասկացությունը ձևավորվել է գիտության մեջ 20-րդ դարի սկզբին: «Եզրույթ»-ը տարբեր հեղինակների կողմից տարբեր կերպ է սահմանվում (А. А. Реформатский, С. В. Гринев-Гриневич, В.П. Даниленко), օրինակ՝ «Լեզվաբանական հանրագիտարանային բառարան»-ում «եզրույթ»-ը սահմանվում է որպես՝ բառ կամ բառակապակցություն, որը նշանակում է գիտելիքների և գործունեության հատուկ բնագավառին վերաբերող և անվանող հասկացություններ: Այն մտնում է լեզվի ընդհանուր բառապաշարի մեջ, բայց միայն որոշակի եզրութային համակարգի (եզրութաբանության) միջոցով» [ЛЭС, 50]:

Ահմանովան «եզրույթ»-ը սահմանում է որպես հատուկ լեզվի բառ կամ բառակապակցություն, որը ստեղծվում է կամ փոխառվում է հատուկ հասկացությունների ճշգրիտ արտահայտման և հատուկ առարկաների մատնանշման համար [Ахманова, 463]:

Միևնույն ժամանակ, այս լեզվաբանի կարծիքով, «եզրույթ»-ի ամենակարևոր հատկանիշը սահմանված լինելն է:

«Եզրույթ»-ի յուրահատկությունը նրա մասնագիտական կիրառությունն է գիտության որոշակի ճյուղում: Պետք է տարբերակել «եզրույթ»-ը ընդհանուր բառապաշարային ֆոնդի մեջ մտնող բառերից, քանի որ վերջինս առնչվում է համընդհանուր ճանաչում ունեցող օբյեկտի հետ, իսկ եզրույթները՝ յուրահատուկ օբյեկտի հետ, որոնք գոյություն ունեն պարզապես ոչ թե լեզվում, այլ որոշակի եզրութաբանության կազմում: Եթե համագործածական լեզվում բառը կարող է լինել բազմիմաստ, ապա հանդես գալով եզրութաբանական որոշակի ենթատեքստում՝ այն ձեռք է բերում մենիմաստություն: Եզրույթները զուրկ են բազմիմաստությունից, արտահայտչականությունից և դրանով իսկ տարանջատվում են սովորական ոչ եզրութաբանական բառերից, որոնք հենց իրենց առավելությամբ բազմիմաստ են և արտահայտիչ: Լոտտեն նույնպես տեխնիկական եզրույթին է վերագրում այնպիսի յուրահատկություններ, ինչպիսիք են՝ համակարգայնությունը՝ անկախությունը ենթատեքստից, միանշանակությունը, ճշգրտությունը և հակիրճությունը [Лотте, 5-9]:

Անկախ եզրույթների առաջացման աղբյուրից և հնչյունակազմական, բառակազմական ու քերականական առանձնահատկություններից՝ դրանք ներառվում են տվյալ լեզվի բառային կազմում և ենթարկվում այդ լեզվի հնչյունակազմական, բառակազմական և քերականական կառուցվածքին: Եզրույթների և ոչ եզրույթների միջև տեղի է ունենում փոխաբերական անցում. համընդհանուր լեզվի բառերը, կորցնելով իրենց որոշ հատկություններ, դառնում են եզրույթներ՝ չդադարելով լինել համընդհանուր լեզվում կիրառվող բառեր: Որպես օրինակ՝ դիտարկենք անգլերեն լեզվում մարմնի մասերից առաջացած տեխնիկական եզրույթները:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Backbone բառը համագործածական բառապաշարում ունի «ողնաշար» իմաստը (*the row of a connected bones that go down the middle of your back*), սակայն, հանդես գալով որպես տեխնիկական եզրույթ, այն կորցնում է իր ուղիղ իմաստը և նշանակում «գլխավոր մալուխ» (*highspeed, high-capacity connection path that links smaller sub-networks, usually used to connect servers on a network*):

Body բառը համագործածական բառապաշարում ունի «մարմին» իմաստը (*the physical structure of a person*), իսկ որպես տեխնիկական եզրույթ՝ հանդես է գալիս «հիմնական մաս» իմաստով (*in e-mail and Internet news groups the content of a message*):

Mouse բառն համագործածական բառապաշարում ունի «մուկ» իմաստը (*a small furry animal*), իսկ որպես տեխնիկական եզրույթ այն արտահայտում է «համակարգչային մկնիկ» իմաստը (*a common pointing device*):

Եզրույթների մեջ կան նաև բառեր, որոնք գոյություն ունեն միայն որպես եզրույթներ՝ այն էլ մեկ եզրութաբանության սահմաններում, ինչպիսիք են, օրինակ, հաշվողական տեխնիկայի բնագավառում կիրառվող մի քանի եզրույթներ՝

Cache (*հիշապահեստ*) – *a section of memory used to store a temporary copy of selected data for faster access*

Cyberspace (*կիբեռն տարածք*) – *the world in which computers and people interact, normally via the Internet*

Software (*ծրագրային ապահովում*) – *any program or group of programs which instructs the hardware on how it should perform, including operating systems, word processors and application programs*

Hardware (*սարքային ապահովում*) – *the physical units, components, integrated circuits, disks and mechanisms that make up a computer or its peripherals*

Մշտապես կատարվել են հետազոտություններ՝ պարզելու, թե ինչպես, ինչ ուղիներով են եզրույթները համալրում տվյալ լեզուն: Եվ այս տարբեր ժամանակներում կատարված հետազոտությունների ընթացքում տարբեր լեզվաբան-գիտնականներ առաջարկել են տարբեր դասակարգումներ: Ինչպես արդեն նշել ենք, եզրույթները կարող են լինել տվյալ լեզվի բառեր, այլ լեզվի բառեր, կամ միջազգային բառեր ինչպես նաև արհեստականորեն ստեղծված բառեր: Եզրույթների մասին խոսելիս Ա. Ա. Ռեֆորմատսկին առաձնացնում է բուն եզրույթներ, ինչպես նաև եզրույթներից առաջացած արտադրյալներ [Реформатский, 115]:

Ա. Ա. Ռեֆորմատսկին եզրույթները համարել է «երկու տիրոջ ծառա»՝ եզրութաբանության և ընդհանուր ոչ մասնագիտական բառագիտության: Որպես հատուկ դեր կատարող համակարգի անդամ՝ եզրույթը կառավարելի է. եզրույթները ստեղծվում են, կանոնակարգվում կամ կարգաբերվում եզրութաբանական հանձնաժողովներում: Իսկ այն չափով, որքանով որ եզրույթները մնում են որպես «սովորական» բառեր՝ դիմադրում են կարգավորմանը: Դրանք պահպանում կամ զարգացնում են իրենց բազմիմաստությունը, որքան եզրույթը ավելի շատ է կիրառելի այնքան ավելի բազմիմաստ է: Ժամանակակից լեզուներում եզրույթների քանակը շատ

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

մեծ է: Դրանք միլիոնավոր բառեր ու բառակապակցություններ են: Սակայն այդ միլիոնները բաշխվում են գիտելիքների ու տեխնիկայի հազարավոր բնագավառների միջև ու կազմում են բառապաշարի «ծայրամասային» շերտերը՝ հեռու համազգային բառապաշարի միջուկից՝ հիմնական բառակազմից [Реформатский, 121]:

Վ. Պ. Դանիլենկոն նշում է այն հանգամանքը, որ եզրույթների ձևավորման գործընթացում ակտիվ են և օգտակար այն միջոցները, որոնք նաև արդյունավետ են և ակտիվ ընդհանուր օգտագործման բառապաշարի բառակազմության համար [Даниленко]: Եվ այդ ակտիվ միջոցներն են՝

1. Իմաստաբանական
2. Շարահյուսական
3. Ձևաբանական

Այս կարծիքը նաև կիսում են Ա. Վ. Սուպերանսկայան և շատ ուրիշներ:

Եզրույթների դասակարգումը կախված է նրանց կառուցվածքային առանձնահատկություններից, արտահայտած իմաստից, սերման ժամանակից և աշխարհագրական տարածվածությունից: Եզրույթների դասակարգումը անհրաժեշտ է տարբերելու համար եզրույթները՝ ոչ եզրույթներից, ինչպես նաև սահմաններ դնելու համար այս կամ այն եզրութահամակարգերի միջև:

Եզրույթների դասակարգման հիմնական դրույթները, որոնք օգտագործվում են գիտնականների մեծամասնության կողմից, հետևյալն է՝ իմաստային դասակարգում, դասակարգում ըստ սերման և կառուցվածքային դասակարգում:

Դիտարկենք գիտնականների կողմից առաջարկվող համակարգչային եզրույթների մի քանի դասակարգումներ:

Օ. Ա. Կարմիզովը իր աշխատության մեջ առանձնացնում է տեղեկատվական տեխնոլոգիաների գրական և ոչ գրական եզրույթներ [Кармызова]: Գրական եզրույթների դասին են պատկանում ընդհանրապես բոլոր տեղեկատվական տեխնոլոգիաների եզրույթները, իսկ ոչ գրական եզրույթների շարքին՝ մասնագիտական ենթալեզուն և սլենգը:

Եզրույթները պարունակում են մի շարք հատկություններ, որոնք տարբերակում են նրանց ընդհանուր բառապաշարից, դրանք են՝ հասկացությունների անվանակարգը, բովանդակային ճշգրտությունը, հատուկ գիտական ոլորտին պատկանելը, սահմանված լինելը, նշանակության ճշգրտությունը, կոնտեքստային անկախությունը, միանշանակությունը, ոճային չեզոքությունը [Гринева-Гриневич, 26-31] :

Այսպիսով, լեզվում եզրույթների հայտնվելու առաջին ճանապարհը ընդհանուր օգտագործման բառերի կիրառումն է՝ որպես եզրույթ: Այս երևույթի առավելությունն այն է, որ լեզուն պահպանում է իր բառային կազմը և ձեռք չի բերում օտար բառեր այլ լեզուներից և այն բառը, որը սկսում է հանդես գալ որպես եզրույթ, հասկանալի է լինում գրեթե տվյալ լեզվի բոլոր կրողների համար: Բայց, ըստ որոշ հեղինակների, այս մեթոդը ունի որոշակի թերություններ: Վերջինս պայմանավորված է այն հանգամանքով, որ բառը մի կողմից՝ որպես եզրույթ ունի այլ իմաստ, այսինքն՝ այն հանդես է գալիս մի

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

տարբերակում, որպես փոխաբերություն, մյուս կողմից՝ եզրույթը կիրառվում է որպես փոխանունություն, ինչն էլ ավելի է բարդացնում ուղիղ իմաստի տարբերակումը: Հարկ է նշել, որ բառի առօրյա իմաստը հասկանալը չի նշանակում, որ կարելի է հասկանալ այն որպես եզրույթ:

Կարևորագույն հանգամանքներից է նեղ մասնագիտական միջազգային եզրութային միավորներին տիրապետելը առաձին գիտական ոլորտներում: Օրինակ, արմատ «крио»/«cryo»-ն փոխառվել է հունարենից («kyros» ցուրտ, սառը), որը տեխնիկական - մասնագիտական միջավայրերում նշանակում է ցածր ջերմաստիճան: Ցանկացած նոր եզրույթների ստեղծում, կախված եզրույթին առաջադրվող կառուցվածքային պայմաններից և ընդհանուր պահանջմունքներից, որպես տվյալ ոլորտի եզրութահամակարգի նոր անդամ, տվյալ լեզվի բառի առաջադրման փոխարեն, ներգրավվում են միջազգային ֆոնդի համարժեք ներկայացուցիչներ [Канделаки, 1]:

Հունա-լատինական եզրութային միավորները համարվում են անփոխարինելի միջազգային ֆոնդի համար, քանի որ այդ եզրույթները կազմված են դասական մահացած լեզվի բառային և բառակազմական միավորներից, որոնք որևէ փոփոխության չեն ենթարկվում՝ ի տարբերություն կենդանի լեզվի միավորներից կազմված եզրույթների: Այս եզրույթների մեկնաբանությունում ծագումնաբանական կողմը նահանջում է և առաջնային տեղում է հայտնվում եզրութային իմաստաբանությունը: Երկրորդ կարևոր հանգամանքը, որ կարելի է նշել հունա-լատինական եզրույթների մասին խոսելիս, այն է, որ այս եզրույթները, բաղկացած լինելով քիչ վանկերից, առավել հարմար են և թույլ են տալիս հեշտությամբ ստեղծել բազմանդամ խիստ տեղեկատվական բառեր՝ ազգային լեզվում մի քանի բառերից բաղկացած բառակապակցությունների փոխարեն: Օրինակ, **տոմոգրաֆիա՝ շերտավոր ռենտգենային հեղազոտության** փոխարեն: Եվ երրորդ կարևորագույն առավելությունը տարբեր եզրույթներում եզրութամիավորների կրկնությունն է՝ պահպանելով իմաստային միանշանակությունը և թույլ տալով հեշտորեն յուրացնել ու վերարտադրել: Այս երևույթը շատ արդյունավետ է, քանի որ մեկ արմատը կամ ածանցը սովորելով՝ կարելի է հասկանալ բազմաթիվ այլ եզրույթներ: Օրինակ՝ **լոգիա** ածանցը (հուն. "ուսմունք, գիտություն") հանդիպում է՝ բիոլոգիա (կենսաբանություն), պաթոլոգիա (ախտաբանություն), ֆիզիոլոգիա (գործառութաբանություն), հիստոլոգիա (հյուսվածքաբանություն), օնկոլոգիա (ուռուցքաբանություն), կարդիոլոգիա (սրտաբանություն):

Այս արմատներն ու ածանցները մասնագետին հնարավորություն են տալիս հեշտությամբ հասկանալ նոր եզրույթներ: Երբ մասնագետը սովորում է, օրինակ, որ «-գրաֆիա» նշանակում է գրառում/պատկերում, իսկ «անգիո-»՝ նշանակում է անոթ, ապա «անգիոգրաֆիա» եզրույթի իմաստը դառնում է հստակ՝ անոթների պատկերում, առանց լրացուցիչ բացատրության անհրաժեշտության:

Այս համակարգը թույլ է տալիս նաև նոր եզրույթներ ստեղծել, որոնք անմիջապես հասկանալի են դառնում միջազգային գիտական հանրությանը՝ անկախ լեզվական

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

տարբերություններից, քանի որ այս եզրույթային միավորները գրեթե նույնությամբ փոխառվում են տարբեր լեզուների կողմից:

Լատիներենն ու հունարենը հաղես են գալիս որպես գլխավոր մատակարարներ ոչ միայն որպես առանձին միավորների, այլ մի ամբողջ միավորների համակարգի մատակարար, ինչպես նաև՝ որպես բառակազմական մոդելներ:

Կատարված հետազոտությունները ցույց են տվել որ տեղեկատվական տեխնոլոգիաների ոլորտում առավել արդյունավետ են համարվում հետևյալ լատինական նախածանցներից կազմված բառերը: Դրանք են՝ **auto, co, con, de, dicho, dia, ex** և այլն: Եզրույթներում կարելի է հանդիպել հետևյալ օրինակներին՝ **autocommutateur, connexion, contention, coroutine, debogage, déchiffrement, diagramme, diaphonie, exorciseur** և այլն: Իսկ ամենաարդյունավետ նախածանցները համարվում են հետևյալները՝ **micro/macro, multi, mini, meta**.

Եզրույթային բառապաշարի ուսումնասիրության ժամանակ լեզվաբանները շատ ուշադրություն են դարձնում բազմիմաստության, հոմանիշության, համանունության և հականիշության խնդրին:

Ս. Վ. Գրինևը կիսում է Դ. Ս. Լոտտեի [Гринева-Гриневич], [Лотте] կարծիքը այն մասին, որ եզրույթների փոխառությունը՝ հարակից գիտություններից և եզրութահամակարգերից, դիտարկվում է որպես եզրութային բառարանների հարստացման միջոց: Գիտնականը նշում է այն փաստը, որ եզրույթների հակադրումը ընդհանուր օգտագործման բառապաշարին կամ նրանց միջև առկա տարբերության անտեսման միտումները կապված են նաև ինժեներների և լեզվաբանների եզրույթների նկատմամբ ունեցած մոտեցումի և պատկերացումի տարբերությունից: Գիտնականները այդ փաստը բացատրում են հետևյալ կերպ, որ հատուկ բառապաշարում կարելի է հանդիպել այնպիսի միավորների, որոնք իրենց ձևով կտրուկ տարբերվում են ընդհանուր օգտագործման բառապաշարից: Տեղեկատվական տեխնոլոգիաների եզրութաբանությունում այդ դասին պատկանող եզրույթներից են՝

MAC-LLB (Mac Layer learning Bridge) Mac մակարդակի ինքնակրթման կամուրջ, ցանցային կանխագիր,

Uuencode ծրագիր, որի օգնությամբ կոդավորվում է հաղորդագրությունը (որպես կանոն ոչ տեքստային նշոցներ, որոնք ուղարկվում են էլ. փոստի միջոցով), որի ընթացքում հաղորդագրության ծավալը մեծանում է 4 անգամ:

Ս. Վ. Գրինևը տվյալ խմբին նաև վերագրում է այն միավորները, որոնք գրելաձևով համընկնում են կենցաղային բառապաշարին: Մասնավորապես՝

Housekeeping համակարգչային համակարգում կատարվող աշխատանքային գործողություն,

Wizard վարպետ, փորձագետ (օժանդակող գործառույթ սկսնակների համար ինֆորմացիա տրամադրող, ակնարկներ ծրագրի ճիշտ օգտագործման, փորձառու օգտագրերը կարող են այն անջատել),

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

Flame վիրավորանք համացանցում որևէ մեկի հասցեին, օրինակ՝ հաղորդագրություն, որի նպատակն է ստորացնել կամ վիրավորվել հասեցեատիրոջը,

Backdoor ետնադուռ, համակարգի թույլ կողմը, որի միջոցով մեկ այլ անձ կարող է ստանալ հասանելիություն համակարգին:

Ընդհանուր լեզվի հիման վրա կազմված եզրութավորումը բերում է նրան, որ միևնույն եզրույթը հանդես է գալիս տարբեր իմաստներով գիտության տարբեր ոլորտներում տեղեկատվական տեխնոլոգիաների լեզվաբանությունում նման բառերից են.

Bug կենդանաբանության մեջ թարգմանվում է որպես *փոքր միջատ*, բժշկության մեջ՝ որպես *վարակիչ հիվանդություն*, *բակտերիա*, տեղեկատվական տեխնոլոգիաներում՝ *թերություն*, *սխալ*,

Base որպես ռազմական եզրույթ այն թարգմանվում է, որպես *հիմք*, *ամուր հենք*, սպորտում՝ *սկիզբ*, ճարտարապետության ոլորտում՝ *հիմք*, *պատվանդան*, մաթեմատիկայի մեջ՝ *հիմք*, *հաշվարկային համակարգ*, համակարգչային ոլորտում՝ *բազա*, *բազային հասցե*,

Finger աշխարհագրության մեջ այս եզրույթը թարգմանվում է որպես *կղզի*, *ենթակղզի*, որը երկարավուն տեսք ունի, տեխնիկական փաստաթղթերում *finger* նշանակում է *մատ*, *քորոց*, տեղեկատվական տեխնոլոգիայի ոլորտում այն *համացանցի ծառայությունն է*, որը տրամադրում է ինֆորմացիա օգտատիրոջ մասին մեկ այլ համակարգչի, օրինակ՝ ամբողջական անունը, համակարգ մուտք գործելու և համակարգից դուրս գալու ամսաթվերը և այլ տվյալներ:

Չի կարելի չգնահատել անգլերենի դերը շատ լեզուների բառապաշարային կազմի ընդարձակման հարցում: Լեզվում տեղի ունեցող փոփոխության պատճառները շատ դեպքերում ակնհայտ են. դրանք ժամանակակից հասարակության ներսում տեղի ունեցող տեխնոլոգիական և մշակութային փոփոխություններն են, տեխնոլոգիական հեղափոխությունն ու գլոբալիզացիան (համաշխարհայնացումը): Անկախ այն բանից, թե որոնք են լեզվի փոփոխության պատճառները, լեզվի հետազոտողները պետք է ուսումնասիրեն և հաշվի առնեն այդ փոփոխությունները իրենց աշխատանքի ընթացքում:

Լեզու-դոնորը հիմնականում դիմում է բառակազմական և իմաստաբանական ռեսուրսներին՝ լինելով այդ ամենի մեջ [Лашкевич, 8]:

Առաջադրման եղանակները (while being derived), որոնց օգտագործման ընթացքում լեզվական միավորի ձևը փոփոխություն չի կրում, այլ տեղի է ունենում նշանակության փոփոխություն, կոչվում են իմաստային [Тратниковас]:

Ամենից հաճախ ընդհանուր օգտագործման բառապաշարից բառը ընտրվում է որևէ կոնկրետ գիտության հասկացության համար և այդ գործընթացում նրա իմաստը սովորաբար ավելի սեղմվում է և դառնում հստակ կանխորոշված [Анисимова]:

Լ. Ի. Ռուդնիցկայան նշում է, որ անանցանելի սահմաններ եզրույթների և ոչ եզրույթների միջև չկան: Նրանց միջև անընդհատ փոխազդեցություն և փոխանակում է

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

տեղի ունենում: Յուրաքանչյուր եզրույթային համակարգի ստեղծման գործընթացում կարելի է նկատել ընդհանուր օգտագործման բառերի վերափոխումը եզրույթների: Եվ այդ ընթացքում տեղի է ունենում հատկանշական անցում ընդհանուր օգտագործման իմաստից դեպի եզրույթի՝ առաջինի փոխաբերության և փոխանունության վերաիմաստավորման հիման վրա [Рудницкая]:

Այսպիսով, հատուկ անվանումների ստեղծման և լեզվի զարգացման ընթացքում առավել արդյունավետ միջոցներից է իմաստային եզրույթների ստեղծումը: Իմաստային ուղիների միջոցով նոր բառերի ստեղծումը կայանում է արդեն գոյություն ունեցող բառի մեջ նոր իմաստների զարգացման երկրորդական նշանակության ավելացման շնորհիվ:

Եզրույթները կարելի է դիտարկել մոտիվացվածության տեսանկյունից: Այս ուղղությամբ 20-րդ դարում հետազոտություններ և ուսումնասիրություններ է կատարել Ե. Ա. Շտեյնգարդը: Նա ուսումնասիրել է, թե ինչպես է ի հայտ գալիս մոտիվացվածությունը հատուկ բառապաշարի տարբեր շերտերում, մասնավորապես՝ դինամիկ, բառապաշարային-գրաֆիկական, գործառույթային [Штейнгард]:

Այսպիսով, մոտիվացվածությունը եզրույթների ձևավորման գործընթացում դիտարկվում է առանձին-առանձին. եզրույթի ձևի մոտիվացվածություն և եզրույթի գործառույթի ու իմաստի մոտիվացվածություն:

Եզրույթները ձևի տեսանկյունից կարող են լինել ամբողջությամբ մոտիվացված, մասնակի մոտիվացված, կեղծ մոտիվացված և չմոտիվացված: Ամբողջությամբ մոտիվացված եզրույթները այն եզրույթներն են, որոնք բաղկացած են մեկ տարրից, որի ընտրությունը պայմանավորված է եզրույթաբանական նշանակությամբ: Օրինակ՝ **coding** – կոդավորում, **compatibility** – համատեղելիություն, **device** – սարք, **interaction** – փոխգործակցություն, **searching** – որոնում:

Մասնակի մոտիվացված եզրույթները, բազմատարր եզրույթներն են, որոնց տարրերի մի մասը բացատրված և մեկնաբանված է, իսկ մյուս մասը՝ ոչ: Օրինակ, թղթապանակ (Folder): «Թղթապանակ»-ը մեզ համար տեսանելի և հասկանալի է. դա «փաստաթղթեր պահելու» վայր է: Բայց համակարգչում այն պարզապես ֆայլային կառուցվածքի տրամաբանական միավոր է, որը պահում է այլ ֆայլեր և թղթապանակներ: Այսինքն՝ «թղթապանակ»-ը մասնակի մոտիվացված է. տեսքը ու անվանումը հասկանալի են, բայց տեխնիկական նշանակությունը՝ ոչ ամբողջությամբ:

Կեղծ մոտիվացված եզրույթներին բնորոշ է ոչ ճիշտ կամ արդեն հնացած բացատրությունը: Օրինակ՝ **joystick**, **joy** – ուրախություն, **stick** – փայտիկ: Ի սկզբանե այս եզրույթը նշանակել է խաղի վահանակ: Վահանակով խաղ, որը մարդկանց ուրախ ժամանցն էր ապահովում: Այս առումով **joystick** բառը ամբողջությամբ մոտիվացված է: Ներկա պահին այդ իմաստը այլևս չի գործածվում և այն այլևս ընկալվում է որպես կառավարման վահանակ՝ դառնալով կեղծ մոտիվացված:

Չմոտիվացված եզրույթները այն եզրույթներն են, որոնց ձևի ընտրությունը որևէ կերպ հնարավոր չէ մեկնաբանել: Սրանք հաճախ վերցված են այլ լեզուներից՝ առանց թարգմանության: Կարող են լինել հապավումներ, թվանշաններ, կամ արհեստական

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

ձևով ստեղծված բառեր, նրանց ձևը **ոչ մի կերպ չի օգնում հասկանալ**, թե ինչ են նշանակում: Օրնակ՝ Bluetooth - անլար կապի ստանդարտ: Անունը վերցված է սկանդինավյան թագավորից (Harald "Bluetooth"), բայց դրա կապը տեխնոլոգիայի հետ չես հասկանա առանց բացատրության:

Վերոգրյալից կարելի է եզրակացնել, որ եզրույթի ստեղծման պահին այն մոտիվացված է, իսկ հետագայում հնարավոր է ենթարկվի որոշ փոփոխությունների: Եզրույթի ստեղծման գործում որպես մոտիվացիա հանդես է գալիս կամ տվյալ առարկայի անվանումը (համապատասխան լեզվում) կամ էլ երևույթի անվանումը: Այս մեխանիզմով կարող են ստեղծվել նույնիսկ մինչև 11 անդամներից բաղկացած եզրույթներ [Лейчик, 40]: Օրինակ՝

Computer-based message system – համակարգչի վրա հիմնված համակարգ, համակարգչային համակարգի օգտագործում, որպեսզի գործածողները հնարավորություն ունենան հաղորդագրություններ ստանալ այլ գործածողներից:

Memory-to-memory instruction – հրահանգ, որը տեղափոխում է ինֆորմացիան հիշողությունից և վերադարձնում է այն հիշողություն: Ինֆորմացիան կարող է փոփոխության ենթարկվել այդ տեղափոխման ընթացքում և այն կարող է չվերադառնալ իր նախկին վայրը:

Variable word length computer - փոփոխական երկարությամբ բառ համակարգիչ, որում բառ կազմող բիթերի քանակը փոփոխական է և փոխվում է համաձայն տվյալների տեսակի: Ժամանակի ընթացքում ակնհայտ է դարձել, որ հինգ և ավելի միավորներից կազմված ապա այդ եզրույթները հանդես են գալիս հապավումներով՝ հաղորդակցումն ավելի մատչելի դարձնելու համար: Օրինակ՝

Network Independent File Transfer Protocol – NIFTP – նշոցների փոխանցման անկախ կանխագրային համակարգ,

Personal Computer Memory Card International Association -անհատական համակարգիչների հիշողության քարտ միջազգային ասոցիացիա:

Քանի որ լեզուն հանդես է գալիս որպես հաղորդակցության միջոց, ինչպես նաև գիտելիքի կուտակման և փոխանցման հիմնական աղբյուր, ապա անհրաժեշտ է ստեղծել հստակ, իմաստաբանական և կառուցվածքային առումով համահունչ եզրութային համակարգեր, այս գործընթացը արդյունավետ կազմակերպելու համար:

Եզրակացություն

Կատարված ուսումնասիրությունների եւ վերլուծությունների արդյունքում կարող ենք կատարել հետևյալ եզրակացությունները.

- Տեղեկատվական տեխնոլոգիաների եզրութաբանությունը ներկայացնում է ժամանակակից լեզվաբանության ամենադինամիկ և բարդ ոլորտներից մեկը: Այս ոլորտի կարևորությունը պայմանավորված է 21-րդ դարի տեղեկատվական հեղափոխությամբ և համակարգչային տեխնոլոգիաների արագ զարգացմամբ:

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

- Տերմինների ստեղծումը և կիրառությունը պայմանավորված են ոչ միայն գիտական անհրաժեշտությամբ, այլև լեզվական, մշակութային և տեխնոլոգիական գործոններով: Այս բազմագործոնային մոտեցումը բացահայտում է եզրութաբանական համակարգերի ներքին բարդությունը:
- Լեզուն միաժամանակ հանդես է գալիս և՛ որպես հաղորդակցության միջոց, և՛ որպես գիտելիքների կառուցման ու փոխանցման գործիք: Այս երկակի բնույթը պահանջում է ստեղծել հստակ, իմաստաբանական և կառուցվածքային առումով համահունչ եզրութային համակարգեր:
- Մոտիվացվածության սկզբունքը հանդիսանում է եզրույթների ձևավորման և ընկալման առանցքային գործոն: Հետազոտությունը ցույց է տալիս, որ եզրույթները կարող են լինել ամբողջությամբ մոտիվացված, մասնակի մոտիվացված, կեղծ մոտիվացված և չմոտիվացված: Այս դասակարգումը կարևոր է եզրույթների ըմբռնելիության և ընկալման հեշտության տեսանկյունից:
- Հունա-լատինական եզրութային հիմքի գերակայությունը տեղեկատվական տեխնոլոգիաների բնագավառում բացատրվում է մի քանի գործոններով՝ միջազգային ճանաչում, իմաստային կայունություն, բառակազմական արդյունավետություն և ուսումնասիրման հեշտություն: Այս համակարգը թույլ է տալիս մեկ արմատ կամ ածանց սովորելով հասկանալ բազմաթիվ եզրույթներ:
- Իմաստային դերիվացիան (փոխաբերական իմաստազարգացում) եզրույթների ստեղծման ամենարդյունավետ ուղիներից մեկն է: Այս մեխանիզմի միջոցով ընդհանուր բառապաշարի բառերը ձեռք են բերում հատուկ տեխնիկական իմաստ՝ պահպանելով կապը սկզբնական նշանակության հետ:

Գրականության ցանկ

1. Հասմիկ Ղաջոյան, Եզրույթի եւ Բառի Գիտական Սահմանումն ու Դրանց Առանձնահատկությունները, 2018, էջ 54-62:
2. Арутюнова Н.Д., Функции языка. // Русский язык. Энциклопедия, 1997, 720 с.
3. Ахманова О.С., Словарь лингвистических терминов, 1966, 606 с.
4. Анисимова А. Г., Методология перевода англоязычных терминов гуманитарных и общественно-политических наук, 2010, 503 с.
5. Гринев-Гриневич С. В., Терминоведение, 2008, 302 с.
6. Даниленко В.П., Русская Терминология, 1977, 246 с.
7. Канделаки Т. В., Семантика и Мотивированность Терминов, 1977, 167 с.
8. Кармызова О. А., Компьютерная лексика: Структура и развитие, 2003, 23 с.
9. Лотте Д. С. 1961, Основы Построения Научно-Технической Терминологии, 160 с.
10. Лашкевич О. М., Тенденции словообразования в современном английском языке, 2007, с. 1-8
11. Лейчик В. М., Терминоведение: предмет, методы, структура, 2009, 256 с.

12. Лингвистический энциклопедический словарь, 1990, 683 с.
13. А. А. Реформатский, Введение в языковедение, , 2004, 533 с.
14. Рудницкая Л. И., Семантической трансформации основных номинативных единиц в современном русском языке, 2007, 27 с.
15. Тратниковас А. В., Понятие семантической деривации, 2015, 803 с.
16. Штейнгарт Е. А., Лексика алюминиевой промышленности в свете теории мотивации, 2005, 27 с.

SEMANTIC-STRUCTURAL CHARACTERISTICS OF TERMINOLOGY IN THE FIELD OF INFORMATION TECHNOLOGY

Anush Harutyunyan

Candidate of Pedagogical Sciences
EUA, Chair of Applied Linguistics
anushharutyunyan1903@gmail.com

Nvard Ohanyan

EUA, Chair of Applied Linguistics
nvard.ohanyann@gmail.com

Abstract

The field of Information Technology (IT) represents one of the driving forces of progress and innovation in the contemporary world. The rapid development of this field necessitates the creation and application of new terminology that reflects technological advances and innovations. Language penetrates science through terminology, which ensures the development and improvement of science and technology, industrial sectors, and all spheres of social life, thereby contributing to societal progress. New words—terms—are created and borrowed to express new concepts. The study of sources for terminological system enrichment and the process of term creation has consistently been a paramount concern for linguists of all eras, from classical scholars to contemporary researchers.

The issues of systematizing terminological creation processes have been addressed by numerous scholars, including D.S. Lotte, L.A. Kandelaki, R.G. Pitrovsky, V.N. Prokhorov, V.G. Gak, A.V. Superanskaya, and others.

Information technology terminology belongs to the category of least studied problems in contemporary linguistics. Even the term "information technology" itself is interpreted in many different and contradictory ways in the works of numerous linguists. Information technology terminology has not received adequate linguistic study, clarification, and analysis. The linguistic and extralinguistic factors underlying the emergence of information technology terms in language remain unexplored.

This article examines the semantic-structural characteristics of information technology terminology. The rapid development of information technologies and the changes occurring in science and society require terminological solutions in language, which constitutes a continuous process requiring meticulous study, analysis, improvement, and development, thereby determining the relevance of the selected topic. The purpose of this research is to reveal the patterns of formation, development, and application of information technology terminology based on a comprehensive

ԲԱՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆ

study of the semantic-structural characteristics of IT terminology. The research employs the following methodological approaches: comparative, contrastive, and analytical methods.

Keywords: Terms, information technologies, terminology, semantic-structural characteristics.

Ներկայացվել է՝ 04.04.2025թ.

Ուղարկվել է գրախոսման՝ 22.05.2025թ.